



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17319

1879

37

---

4-21

37  
4-21

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ.Ս.Ս.Ր.Վ. Գրական Բիբլիոթեկա  
7/21 1922  
Իմենյա Վասիլի Մանուկյանի  
Ս.Ս.Ս.Ր.Վ. ԳՐԱԴԱՐԱՆ

281

2010



2001

8703



370

2042-40

### ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

37  
4-21

ՔԱՐԻՁՈՒ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ, Ի 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1879

1669  
1670  
1671  
1672  
1673  
1674  
1675  
1676  
1677  
1678  
1679  
1680

**Յօդուած 1.** — Ընկերութեան նպատակն է Հայաստանցի աղէտս հայ պատանեկաց Եւրոպայի մէջ գործնական գիտութիւններ ատանդել տալ :

**Յօդ. 2.** — Ընկերութեան հասումից 50% ի պահես կը մնայ . գործածելի գումարն նպատակի գործադրութեան կը յատկանայ երբ բաւ լինի որդեգրին ուսումնական ընթացքին ծախքն ապահովելու :

**Յօդ. 3.** — Ընկերութեան Կեդրոնատեղին է ի Բարիզ, 15 Rue Claude-Bernard.

**Յօդ. 4.** — Դիւանի կամ ներկայացուցչաց հաւանութեամբ ընկեր կ'ընդունուի ամեն անձ առանց խտրութեան սեռի, կրօնի եւ ազգութեան :

**Յօդ. 5.** — Անձնիւր ընկեր պարտի վճարել .

Ա. Հինգ ֆրանք իբր մուտք ի սկզբան ընկերակցութեան .

Բ. Ամսական մի բաժնոյ համար մի ֆրանք :

**Յօդ. 6.** — Ընկեր մը որ շարունակ տարի մը բաժնեզին չը վճարե բուէ՛ տալու իրաւունքէն կը զրկուի, մինչեւ որ վճարէ իւր պարտքն :

**Յօդ. 7.** — Ի սկզբան ընկերակցութեան առ նուազն 500 ֆրանք վճարողը մշտնջենաւոր ընկեր կը լինին :

**Յօդ. 8.** — Ընդհանուր ժողովն իրեն կը վերապահէ պատւոյ անդամներ ընտրելու իրաւունքն :

**Յօդ. 9.** — Ընդհանուր ժողովն կը բաղկանայ Բարիզ զըս-  
նուող հայ ընկերներէ :

**Յօդ. 10.** — Ընդհանուր ժողովոյ նստերն կանոնաւոր են  
15 ընկերաց ներկայութեամբ. եթէ առաջին նստի մը մէջ այս  
թիւն չը գոյանայ, հետեւեալ նիստն կանոնաւոր է ո եւ է Յուով  
ընկերաց ներկայութեամբ :

**Յօդ. 11.** — Ընդհանուր ժողովոյ նստերն տեղի կ'ունենան  
իւր Կեդրոնատեղոյն մէջ :

**Յօդ. 12.** — Ընդհանուր ժողովն Դիւանի անդամոց ըն-  
տութիւնն կը կատարէ զաղտնի քուէարկութեամբ. եթէ բա-  
ցարձակ առաւելութիւն չը գոյանայ, կրկին քուէարկութեամբ  
համեմատական առաւելութիւնն բաւական կը համարուի կամ,  
հաւասար քուէ գոյացած ասէն, երիցագոյնն ընտրեալ կը հա-  
մարուի :

**Յօդ. 13.** — Ընդհանուր ժողովոյ որոշումներն քուէարկուաց  
մեծամասնութեամբ կը տրուին :

**Յօդ. 14.** — Ընդհանուր ժողովոյ սովորական նստերն տեղի  
կ'ունենան երեք ամիսն անգամ մը. Ընդհանուր ժողովն կրնայ  
արտարոյ կարգի նիստ ընել Դիւանի որոշմամբ կամ 10 ընկե-  
րաց գրաւոր առաջարկութեամբ :

**Յօդ. 15.** — Վիճարանութեանց մէջ ընկեր մը մի եւ նոյն  
խնդրոյն վրայ երեք անգամէ աւելի խօսելու իրաւունք չ'ունի :

**Յօդ. 16.** — Եթէ Ընդհանուր ժողովոյ անդամներէն մին  
ժողովոյ օրինաւորութիւնն խանգարելու վարմանց մէջ զըս-  
նուի, մի եւ նոյն նստին մէջ, առաջին անգամուն ի կարգ կը  
կոչուի, երկրորդ անգամուն խօսելու եւ քուէարկելու իրա-  
ւունքն կը կորսնցնէ եւ երրորդ անգամուն, ժողովականաց  
հաւանութեամբ, կը հրաւիրուի հեռանալ ժողովատեղիէն :

**Յօդ. 17.** — Ընդհանուր ժողովն իրաւունք ունի հրաժա-  
րեցնել այն ընկերներն որք ընկերութեան շահուց եւ օրինաց  
հակառակ կը գործեն :

**Յօդ. 18.** — Դիւանն ընկերութեան վարիչ եւ գործադիր  
մարմինն է :

**Յօդ. 19.** — Դիւանն կը բաղկանայ եօթն անդամներէ ,

որք իրենց մէջ կ'ընտրեն մի Ասենապետ , երկու Դեր-Ասենա-  
պետ , մի Ասենադպիր , մի Դեր - Ասենադպիր , մի Գանձապետ  
եւ մի Համարակալ :

**Յօդ. 20.** — Դիւանի պաշտօնն կը տեւէ երկու տարի . իւր  
անդամք վերընտրելի են :

**Յօդ. 21.** — Դիւանն 15 օրն անգամ մը կ'ընէ իւր սովոր-  
ական նիստն, սակայն ի հարկին կրնայ գումարուիլ աւելի  
յաճախ :

**Յօդ. 22.** — Դիւանի անդամք անհասարար պատասխանա-  
տու են առ Դիւանն եւ հաւարաբար առ Ընդհանուր ժողովն :

**Յօդ. 23.** — Համարական կը պարտի երեք ամիսն անգամ  
մը ընկերութեան դրամական վիճակն ներկայել Ընդհ. ժողովոյ :

**Յօդ. 24.** — Դիւանն իրաւունք չ'ունի առանց Ընդհանուր  
ժողովոյ հաւանութեան , ընկերութեան գործառնութեանց ան-  
հրաժեշտ պէտքերէն զատ ո եւ է անսովոր ծախք մ'ընել , բայց  
կարգէ դուրս հաստութից դիմուած ասէն կամ ստիպողական  
պարագայից մէջ կրնայ ազատութեամբ գործել պատասխանա-  
տուութիւնն իւր վրայ առնելով :

**Յօդ. 25.** — Եթէ Դիւանի անդամոց մին անփոյթ կամ ան-  
կարող լինի իւր պաշտօնավարութեան մէջ եւ կամ տեղի այ  
անվստահութեան , Դիւանն կրնայ պահանջել Ընդհանուր ժո-  
ղովէն նորա հրաժարումն :

**Յօդ. 26.** — Ընկերութեան դրամով արժէթղծեր կը գնուին  
եւ դրամասն մը մէջ կը գետնորդին ի պահպանութիւն . Ընդ-  
հանուր ժողովն կը կատարէ արժէթղծոց եւ դրամասան ըն-  
տութիւնն :

**Յօդ. 27.** — Դրամասան հետ կատարուած գործողութեանց  
մասին Ասենապետի, Գանձապետի եւ Համարակալի միաբան  
ստորագրութիւնք կարեւոր են :

**Յօդ. 28.** — Եթէ Գանձապետն Բարիզ հաստատուած չ'է ,  
պարտի ապահով երաշխաւորութիւն մը տալ :

**Յօդ. 29.** — Գանձապետն իրաւունք չ'ունի 500 ֆրանքէ ա-  
ւելի գումար մը պահել իւր մօտ :

**Յօդ. 30.** — Ամեն տարեկան շրջանի վերջն Ընդհանուր

ժողովն երեք անգամներէ Յանձնաժողով մը կ'ընտրէ Դիւանի հաշիւներն եւ Սնտուկի վիճակն քննելու համար: Դիւանի անդամք այս Յանձնաժողովոյ ընտրութեան չ'են մասնակցիր:

**Յօդ. 31.** — Ընկերութիւնն ամեն հայաքնակ քաղաքի մէջ իւր ներկայացուցիչներն կրնայ ունենալ, զորս կ'ընտրէ Ընդհանուր ժողովն եւ որոց պէտք է զիմեն նոյն քաղաքի ընկերներն, իրենց բաժիններն վճարելու, անդորրագրերն ստանալու եւ առաջարկութիւններն ներկայացնելու համար: Ներկայացուցիչք պարտին ընկերաց ամսավճարներէն եւ մասնաւորաց նուէրներէն գոյացած գումարն ամեն երեք ամիս ուղղակի Դիւանին յղել:

**Յօդ. 32.** — Եթէ ընկերութիւնն լուծուի, Գոսանդնուպօլսոյ Ազգային ժողովն տէր կը լինի նորա բոլոր ստացուածոց զորս կը յատկացնէ Հայաստանի հայ մանկւոյն կրթութեան:

**Յօդ. 33.** — Այս կանոնագիրն չը կրնար վերաքննուիլ մինչեւ 1 սեպտեմբեր 1885, սակայն ստիպողական պարագայից մէջ Դիւանն կամ 10 ընկերք կրնան բարեփոխումներ առաջարկել Ընդհանուր ժողովոյ:



0  
100 21

2013

« Ազգային գրադարան »

17319



NL0050358

